

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
/ 01.01.2016թ-31.12.2016թ/

### 1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

01.01.2016թ- 31.12.2016թ ընթացքում համայնքապետարան է դիմել 130 բնակիչ , դիմումատերերի հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Համայնքապետարանը , համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով, իր միջնորդությամբ հանդես է եկել անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, կադաստրային տարածքային ստորաբաժնում:

Համայնքում տարվա ընթացքում կայացել է ավագանու 9 նիստ,ընդունվել է 35 որոշում, որոնք ներկայացվել են մարզպետարան: Համայնքի կողմից կայացվել է տարբեր բնույթի 53 որոշում, 48 կարգադրություն,որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան: Ընթացիկ ժամանակահատվածում համայնքապետարանը ստացել է 166 գրություն, հղվել է 164 պաշտոնական գրություն, բնակիչներին տրվել է 577 տեղեկանք:

### 2.Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2017թվականի տարեկան բյուջեի նախագիծը, տնօրինել է համայնքի 2016թվականի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը:

## ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

1. Հողի հարկ	8343.7 հազ. դրամ
2. Գույքահարկ	4943.4 հազ. դրամ
3. Գույքի վարձ. վճար	1140.0 հազ. դրամ
4. Դոտացիա	47031.5 հազ.դրամ
5. Տարեսկզբի ազատ մնացորդ	111.6հազ. դրամ
6. Հողի վարձ. Գումար	137.0 հազ.դրամ
7. Տեղական տուրքեր	90.0 հազ.դրամ
8. Տեղական վճար	15.0 հազ.դրամ
9. Հողի օտարումից մուտքեր	42.0 հազ. դրամ

## ԾԱՆՍԱՅԻՆ ՄԱՍ

1.Տեղական ինքնակառավարում	27862.5 հազ. դրամ
2.Համայնքային այլ ծառայություն	2498.6 հազ. դրամ
3.Կրթություն և մշակույթ	5284.1 հազ. դրամ
4. Սոց. օգնություն	3380.0.0հազ. դրամ
5. Երիտասարդական ծրագրեր	1763.4հազ. դրամ
6. Նախադպրոցական ուսուցում	15570.0 հազ. դրամ
7.աղբահանություն	1970.0 հազ. դրամ
8. Առողջապահություն	160.1 հազ.դրամ
9.Փողոցների լուսավորություն	444.6 հազ.դրամ
10.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայ. 1397.1հազ.դրամ	

11. Հանգստի և սպորտի ծառայ.

130.0 հազ. դրամ

Համայնքապետարանը աշխատակազմի աշխատակիցների և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

### 3. Պաշտպանության բնագավառում

Համայնքապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

Հատուկ ուշադրություն է դարձվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Երիտասարդության շրջանում մեծ աշխատանքներ են տարվում ռազմաօդային և օդային ուժերի ղախտիարակելու գործում:

### 4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

### 5. Կոմունալ տնտեսություն և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է ամենշաբաթյա աղբահանում, որի համար հատկացվել է 1970.0 հազ. դրամ: Կատարվել է համայնքի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգման աշխատանքներ, որի նպատակով ծախսվել է 444.6 հազ. դրամ: 1400.0 հազար դրամ

համար: Մանկապարտեզում գտնվող և  
աշխատանքներ, որի համար համայնքապետարանը հատկացրել է  
950.0 հազ. դրամ: Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝  
Մարտի 8-ի, Ապրիլի 24-ի, Մայիսի 9-ի, , դպրոցի շրջանավարտների,  
մանկապարտեզի հանդեսի , սեպտեմբերի 1-ի, Նոր տարվա  
կապակցությամբ:

219.2 հազ. դրամ հատկացվել է մարտի 8-ի և ապրիլի 7-ի  
կապակցությամբ համայնքապետարանի և մանկապարտեզի կին  
աշխատակիցներին նվերներ ձեռք բերելու համար:

2016թ. շրջանավարտներին համայնքապետարանը հատկացրել է  
250.0 հազ. դրամ:

Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ, համայնքապետարանի կողմից  
առաջին դասարանցիների նվերների համար հատկացվել է  
178.6 հազ. դրամ: Յուրաքանչյուր նորածին երեխային տրվել է 30.0  
հազ. դրամ:

Ամանորի կապակցությամբ համայնքի 500 երեխաներին հատկացվել  
է 480 հազ. դրամ արժողությամբ նվերներ:

**7. Մպորտի և սոցիալական ծառայության բնագավառում**

Սոցիալապես անապահով ընտանիքներին, ևտրածին երեխաների ծնողներին հատկացվել է 2050,0 հազ. դրամ որպես օգնություն: Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Արցախյան պաշտպանությանը մասնակցած կամավորական ջոկատի անդամներին հատկացվել է 1330,0 հազ. դրամ սոց. օգնություն:

**8. Գյուղատնտեսության բնագավառում**

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքաշրջանառության, պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի, առկա գյուղտնիսնիկայի վերաբերյալ հաշվետվություններ:

Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների հակաեմաճարակային պատվաստումներ:

**Հիմնախնդիրներ**

Առատաշեն գյուղի հիմնական հիմնախնդիրներն են՝

1. Խմելու ջրի ջրազծի վերանորոգման հարցը:
2. Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման հարցը:
3. Մանկապարտեզի շենքի վերանորոգման հարցը:

Համայնքի ղեկավար՝



Վ. Հարությունյան

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ.

Գ. ԱՌԱՏԱՇԵՆ